

ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ ԿԱՐԾԻՔ

Մերի Կարենի Խաչատրյանի՝ ԺԲ.00.04 - Դատական իրավունք
(դատարանակազմություն, քաղաքացիական դատավարություն, վարչական
դատավարություն, քրեական դատավարություն, կրիմինալիստիկա, դատական
փորձաքննություն, փաստաբանություն, օպերատիվ-հետախուզական
գործունեության տեսություն) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների
թեկնածուի գիտական աստիճանի համար ներկայացված
**«Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթը որպես
քաղաքացիական դատավարության տարբերակված ձև»**
թեմայով ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսության թեմայի արդիականությունը

Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման ինստիտուտը Հայաստանում ներդրվել է 2020 թվականի ապրիլի 16-ին «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի (**Օրենք**) ընդունմամբ: Օրենքի ընդունմանը հաջորդող շուրջ չորս տարվա ընթացքում սկսել է ձևավորվել դրա կիրառման պրակտիկան՝ իրավասու մարմնի ուսումնասիրությունների, դատարան ներկայացված միջնորդությունների, հայցադիմումների և դրանց քննության միջոցով: Ընդ որում, այս ինստիտուտը համեմատաբար նոր է ոչ միայն Հայաստանում, այլ նաև այն ներդրած օտարերկրյա պետություններում: Ըստ այդմ, թեման խիստ արդիական է, քանի որ ինստիտուտի հետ կապված մի շարք իրավագիտական հարցադրումներ ձևակերպվում են նոր-նոր ձևավորվող իրավակիրառ պրակտիկայում՝ կոնկրետ գործերի դեռևս անավարտ քննությանը զուգահեռ:

Հարկ է նշել, որ քննարկվող վարույթի վերաբերյալ արդեն իսկ կան հայրենական իրավագիտական աշխատանքներ՝ հրապարակված ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմի, ինչպես նաև գործող դատավորների կողմից: Այդուհանդերձ, Մերի Խաչատրյանի հեղինակությամբ ներկայացված ատենախոսությունը նման բնույթի առաջին հետազոտությունն է և կարող է կարևոր նշանակություն ունենալ թեմայի շուրջ հարցադրումների ձևավորման, դրանց իրավագիտական պատասխանների,

հետագա հետազոտությունների, օրենսդրության և իրավակիրառ պրակտիկայի զարգացման առումներով:

Հետազոտության իրականացումը և արդյունքները

Որպես հետազոտության նպատակ՝ ատենախոսության հեղինակը սահմանել է ՀՀ քաղաքացիական դատավարությունում ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցերի հիման վրա հարուցվող գործերի քննության տեսական և գործնական հիմնախնդիրների համալիր ուսումնասիրությունը և դրա հիման վրա իրավակիրառ պրակտիկայի և օրենսդրության կատարելագործման առաջարկների մշակումը (էջ 6): Ինչպես երևում է հենց նպատակի ձևակերպումից, հետազոտությունում շեշտադրված են ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման դատավարական ասպեկտները, այդ թվում՝ քննարկվող վարույթի մինչդատական փուլում դատարանի դերը, վարույթի ամբողջ ընթացքում ծագող հարցերի լուծման դատավարական կարգը, դատավարական ընդհանուր կանոններից տարբերվող հատուկ կանոնները կամ նման հատուկ կանոնների սահմանման անհրաժեշտությունը:

Միաժամանակ, ատենախոսությունը կառուցված է այնպիսի տրամաբանությամբ, որը հեղինակին թույլ է տվել հետազոտական խնդիրները լուծել անհրաժեշտ համակողմանիությամբ՝ դատավարական հարցերը դիտարկելով և իմաստավորելով ապօրինի գույքի բռնագանձման ինստիտուտի ծագման նախադրյալների, դրա նպատակի, վարույթին առնչվող անձանց նյութական իրավունքների լույսի ներքո: Մասնավորապես, նախ ուսումնասիրվել են տարբեր իրավակարգերում ներդրված՝ առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձման մոդելները, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցի բնույթը, և այնուհետև՝ վարույթի մինչդատական և դատական փուլերում ծագող դատավարական հարցերը:

Հետազոտության շրջանակներում ուսումնասիրվել են մեծ ծավալի արտասահմանյան տեսական աղբյուրներ, միջազգային իրավական փաստաթղթեր, օտարերկրյա պետությունների օրենսդրական ակտեր: Հեղինակն ուսումնասիրել է նաև Հայաստանում դեռևս կարճ պատմություն ունեցող այս ինստիտուտի վերաբերյալ հրապարակված իրավագիտական աշխատությունները, ինչպես նաև Հայաստանում ձևավորվող իրավակիրառ, այդ թվում՝ դատական պրակտիկան: Առանձնահատուկ պետք է ընդգծել, որ պրակտիկայի հնարավոր ամենաարդիական նյութերը ևս աշխատանքում արտացոլված են. խոսքը, մասնավորապես, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վերաբերելի վճիռների և ՀՀ հակակոռուպցիոն դատարանի ակտերի մասին է:

Հետազոտության հիմնական արդյունքներից է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցերի ընդունելիության, քննության և լուծման տարբերակված դատավարական կանոններ սահմանելու անհրաժեշտության հիմնավորումը, որը բխում է քննարկվող վարույթի նպատակներից, մինչադատական փուլի առկայությունից, ներգրավված անձանց շահերից և այլ հանգամանքներից: Այս համատեքստում պետք է առանձնացնել ատենախոսության ևս մեկ գիտական դրույթ, ըստ որի՝ ապօրինի գույքի բռնագանձման վարույթի մինչդատական փուլում թույլ տրված որոշակի էական ընթացակարգային խախտումներ պետք է ունենան դատավարական հետևանք արդեն իսկ դատարանում հայցի ընդունելիության տեսակետից. մասնավորապես, դրանք պետք է հանգեցնեն վեճի լուծման նախադատական կարգը չպահպանելու պատճառով հայցադիմումը վերադարձնելուն, իսկ այն ընդունված լինելու դեպքում՝ հայցն առանց քննության թողնելուն: Այս ուղղությամբ ատենախոսության հեղինակի առաջարկները գործնականում ներդրվելու դեպքում կարևոր երաշխիք կդառնան վարույթի մինչդատական փուլի իրավաչափությունն ապահովելու տեսակետից:

Վարույթի մինչդատական փուլում իրավասու մարմնի պատասխանատվության բարձրացմանը, ներգրավված անձանց իրավաչափ շահերի պաշտպանությանն է ուղղված նաև հեղինակի մեկ այլ կարևոր եզրահանգում առ այն, որ իրավասու մարմինը, դատարանում հանդես գալով որպես հայցվոր, պետք է, որպես կանոն, սահմանափակված լինի մինչդատական փուլում իր կատարած ուսումնասիրությամբ, և ըստ այդմ՝ պետք է անթույլատրելի համարվի հայցի հիմքի և առարկայի այնպիսի փոփոխությունը, որը դուրս է գալիս ուսումնասիրության և դրա արդյունքում կազմված եզրակացության սահմաններից:

Աշխատանքը կարևոր և կիրառելի դրույթներ է պարունակում նաև քննարկվող հայցի քննության մի շարք այլ դատավարական հարցերի վերաբերյալ: Մասնավորապես, հատկանշական ենք համարում ապացուցման կանոնների, ապացուցողական կանխավարկածների գործադրման պայմանների մանրամասն վերլուծությունը և հեղինակի առաջարկը՝ ներդնելու ապացուցման բեռի բաշխման երկփուլ կարգ, որի շրջանակներում դատարանը նախ հայցվորի վրա ապացուցման պարտականություն դնելու միջոցով պետք է որոշի գույքի՝ ապօրինի ծագում ունենալու կանխավարկածի գործադրման հարցը, այնուհետև պետք է պատասխանողի վրա դնի օրինական եկամուտներով գույքի ձեռքբերումը ապացուցելու պարտականությունը:

Ի վերջո, հատկանշական են տարբեր համատեքստերում հեղինակի ներկայացրած մի շարք դատողություններ այն մասին, որ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցը կարող է բավարարվել, միայն եթե հաստատվել է ենթադրյալ հանցավոր արարքի և գույքի ձեռքբերման միջև թեկուզև անուղղակի

պատճառահետևանքային կապի առկայությունը կամ դրա ողջամիտ հավանականությունը:

Ընդհանուր առմամբ, ատենախոսության եզրահանգումները պարունակում են մի շարք դրույթներ, որոնք ունեն գիտական նորույթի տարրեր, ինչպես նաև կարող են ունենալ էական և կարևոր կիրառական նշանակություն՝ գործող իրավակարգավորումների ճիշտ կիրառման, ինչպես նաև հետագա օրենսդրական փոփոխությունների մշակման առումով: Բացի այդ, ատենախոսությունը կարևոր տեսական աղբյուր է տվյալ բնագավառի հետագա իրավագիտական հետազոտությունների համար:

Ավելացնենք նաև, որ ատենախոսության հիմնական բովանդակությունը, գիտական դրույթներն ու եզրահանգումները պատշաճ կերպով արտացոլվել են հեղինակի հրապարակած գիտական հոդվածներում և ատենախոսության սեղմագրում:

Նկատառումներ ատենախոսության առանձին դրույթների և եզրահանգումների վերաբերյալ

Ատենախոսության հետազոտական խնդիրների, առանձին գիտական դրույթների, որոշ եզրակահանգումների վերաբերյալ մեր նկատառումները ներկայացվում են ստորև.

1) Ենթադրյալ հանցավոր արարքի և ապօրինի ծագում ունեցող գույքի ձեռքբերման միջև կապի հարցը տարբեր տեսանկյուններից քննարկելիս հեղինակի դիրքորոշումն ընդհանուր առմամբ հանգում է նրան, որ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման պահանջի հիմնավորվածության պայման է **ենթադրյալ հանցավոր արարքի և գույքի ձեռքբերման միջև թեկուզև անուղղակի պատճառահետևանքային կապի առկայությունը կամ դրա հավանականությունը**¹:

Սկզբունքորեն համաձայն լինելով հեղինակի այս դիրքորոշման հետ՝ կարծում ենք, որ կարիք կար այս մասով զարգացնելու հետազոտությունը և պատասխանելու նաև հետևյալ հարցերին՝

- Արդյո՞ք Օրենքով սահմանված՝ ուսումնասիրություն սկսելու հիմքերը այլ նորմերի հետ համակարգային կապի համատեքստում թույլ են տալիս եզրահանգելու, որ Օրենքը պահանջում է ենթադրյալ հանցավոր արարքի և գույքի ձեռքբերման միջև թեկուզև անուղղակի պատճառահետևանքային կապի հիմնավորում:

- Արդյո՞ք դատախազության և դատարանի իրավակիրառ պրակտիկայում Օրենքը մեկնաբանվում է նման պատճառահետևանքային կապի հիմնավորման

¹ Տե՛ս, օրինակ, ատենախոսության 100, 140, 142 էջերը, պաշտպանության ներկայացվող 6-րդ դրույթը.

օգտին, հատկապես այն դեպքերում, երբ պահանջ է ներկայացվում բռնագանձելու ենթադրյալ հանցանքից տարիներ առաջ ձեռք բերված գույքը:

Ենթադրյալ հանցանքի և գույքի ձեռքբերման միջև կապի խնդիրը քննարկվող ինստիտուտում առանցքայիններից է, ուստի ատենախոսության շրջանակներում այս հարցերը հետևողականորեն քննարկելը և դրանց պատասխանելը կարող էր կարևոր նշանակություն ունենալ իրավաչափ պրակտիկայի ձևավորման առումով:

2) Հեղինակն աշխատանքում ներկայացրել է տարբեր իրավակարգերում կիրառվող՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման չորս հիմնական մոդելները և արձանագրել, որ Հայաստանի օրենսդիրը ներդրել է չորրորդ՝ «չբացատրվող հարստացման» մոդելը՝ որոշակի տարրեր փոխառելով նաև երկրորդ և երրորդ մոդելներից: Կարծում ենք՝ նմանատիպ համակողմանի հետազոտության շրջանակներում անհրաժեշտ էր քննարկել նաև օրենսդրի կողմից այս կամ այն մոդելի ընտրության նպատակահարմարությունն ու հիմնավորվածությունն ինքնին՝ ելնելով Հայաստանում ձևավորված պատմական, տնտեսական, սոցիալական և իրավական նախադրյալներից: Մասնավորապես, արդյո՞ք Հայաստանին բնորոշ է եղել կայուն կազմակերպված հանցավորությունը, որի առկայությամբ հիմնավորվել է չորրորդ մոդելի ներդրումն, օրինակ, Իտալիայում: Կամ արդյո՞ք 1990-ական թվականներին սոցիալիստականից շուկայական տնտեսության անցումն ու այդ ընթացքում անխուսափելի ստվերային կամ չփաստաթղթավորված շրջանառությունը կարող է հիմք ծառայել գույքի ձեռքբերումն ապօրինի կամ ընդհուպ հանցավոր որակելու համար: Այս և նման այլ հարցադրումները և դրանց շուրջ թեկուզ ընդհանրական հետազոտությունը գուցե և որոշակիորեն դուրս գար «Դատական իրավունք» մասնագիտության խիստ շրջանակից, բայց, կարծում ենք, արդարացված կլիներ և կապահովեր աշխատանքի համալիրության առավել բարձր մակարդակ:

3) Հեղինակն առաջարկում է սահմանել իրավասու մարմնի լիազորությունը վերսկսելու ավարտված ուսումնասիրությունն այն դեպքում, երբ անձը կեղծված ապացույցների հիման վրա է հիմնավորել իր եկամուտների օրինական աղբյուրը կամ այնպիսի հանգամանքներ են ի հայտ եկել, որոնք ուսումնասիրությունը իրականացնելու պահին հայտնի չէին և չէին էլ կարող հայտնի լինել իրավասու մարմնին²: Կարծում ենք, որ այս պարագայում հարկ էր քննարկել նաև իրավասու մարմնի նման լիազորության ժամկետային սահմանափակումները, օրինակ՝ հայցային վաղեմության նոր ժամկետի ընթացքը կամ հայցի հարուցմամբ ընդհատված վաղեմության վերսկսումը, ինչպես նաև իրավասու մարմնի նման լիազորության մարման ժամկետ սահմանելու հնարավորությունը:

² Տե՛ս ատենախոսության էջեր 78-79, 128-129, պաշտպանության ներկայացվող 3-րդ և 5-րդ դրոյթներ:

4) Ատենախոսությունում առաջարկվում է ներդնել ապացուցման բեռի բաշխման երկփուլ կարգ, որի շրջանակներում դատարանը նախ հայցվորի վրա ապացուցման պարտականություն դնելու միջոցով պետք է որոշի գույքի՝ ապօրինի ծագում ունենալու կանխավարկածի գործադրման հարցը, այնուհետև պետք է պատասխանողի վրա դնի օրինական եկամուտներով գույքի ձեռքբերումը ապացուցելու պարտականությունը³: Այս գաղափարը խիստ պահանջված և արդյունավետ ենք համարում, այդուհանդերձ, առաջարկը թվում է ոչ ավարտուն: Մասնավորապես, ապացուցման բեռի բաշխման երկփուլ կարգն անխուսափելիորեն առաջ է բերում այն հարցը, թե դատարանն ինչ դատավարական ձևով պետք է ամրագրի առաջին փուլով ապացուցման գործընթացի, ապացույցների հետազոտման արդյունքները, որից հետո ըստ այդ արդյունքների պետք է անցի կա՛մ ապացուցման բեռի բաշխման երկրորդ փուլին, կա՛մ հայցի քննությունը տվյալ մասով ավարտի: Այս հարցին հարկ էր անդրադառնալ տվյալ առաջարկի շրջանակում:

5) Հեղինակն առաջարկում է Օրենքում ամրագրել հետևյալ կանոնը. *«Եթե պատասխանողը գործի դատական քննության փուլում ներկայացնում է վիճելի գույքի ձեռք բերումը հավաստող ապացույցներ կամ Օրենքով սահմանված հայտարարագիր, և չի հիմնավորում ուսումնասիրության փուլում իր կամքից անկախ հանգամանքներում դրանց չներկայացումը, ապա դատարանը կարող է դատական ծախսերը անկախ գործի ելքից ամբողջությամբ կամ մասամբ դնել պատասխանողի վրա»⁴.*

Այս առաջարկը վիճելի է թվում, քանի որ ըստ Օրենքի՝ ուսումնասիրության փուլում պատասխանողն ունի ընդամենը մեկ ամիս ժամկետ՝ հերքելու այն, ինչ իրավասու մարմինն ուսումնասիրել է մինչև երեք տարվա ընթացքում: Դեպքերի մեծամասնությունում տեսականորեն կարելի է պնդել, որ պատասխանողը կարող էր իրեն հատկացված մեկամսյա ժամկետում ձեռք բերել և ներկայացնել անհրաժեշտ ապացույցները: Մինչդեռ, դրանք կարող են վարեբերել մի քանի տասնամյակի պատմության, գործարքների, այդ թվում՝ փոխկապակցված ֆիզիկական և իրավաբանական անձանց գործարքների, պատասխանողի համար կարող է դժվարացած լինել ոչ միայն անհրաժեշտ ապացույցները հավաքելը, այլ ինքնին վերաբերելի փաստերը հիշելը և վերհանելը: Ըստ այդմ, հեղինակի առաջարկած կանոնը բավական խիստ է թվում: Կարծում ենք, որպես այլընտրանք, պատասխանողի վրա դատական ծախսերը կարող են դրվել այն դեպքում, երբ հստակ ապացուցված է, որ հայցը մերժելու համար անհրաժեշտ ապացույցներն

³ Տե՛ս ատենախոսության 3 2 պարագրաֆը և պաշտպանության ներկայացվող 7-րդ դրույթը.

⁴ Տե՛ս ատենախոսության 158-160-րդ էջեր:

ուսումնասիրության փուլում արդեն իսկ հասանելի էին պատասխանողին, բայց նա դրանք ներկայացրել է միայն վարույթի դատական փուլում:

Եզրակացություն

Վերը նշված նկատառումներն, այնուամենայնիվ, միայն բանավիճային բնույթ ունեն և կասկածի տակ չեն դնում ատենախոսության գիտական մակարդակը: Հետազոտությունը կատարված է բարեխղճորեն, հիմնավոր մեթոդաբանությամբ, իսկ դրա արդյունքներն ունեն գիտական և կիրառական կարևոր նշանակություն:

Ըստ այդմ, Մերի Կարենի Խաչատրյանի «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթը որպես քաղաքացիական դատավարության տարբերակված ձև» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ կառավարության 1997 թվականի օգոստոսի 8-ի N 327 որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանների շնորհման կարգի 6-րդ և 7-րդ կետերի պահանջներին, իսկ հեղինակն արժանի է ԺԲ.00.04 - Դատական իրավունք (դատարանակազմություն, քաղաքացիական դատավարություն, վարչական դատավարություն, քրեական դատավարություն, կրիմինալիստիկա, դատական փորձաքննություն, փաստաբանություն, օպերատիվ-հետախուզական գործունեության տեսություն) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս

Վահագն Դալլաքյան, ի.գ.թ., դոցենտ

16.12.2024թ.

«Վ. Դալլաքյանի ստորագրության իսկությունը հաստատում եմ»
ԵՂՂ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԴԵԿԱՆ ԵՆՂԱԿԱՆ

Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ

